

ՍԱՐԳԻՍ ԲԱԼՈՒՆՅԱՆ

Զ. Գ. ԲԱՆՁՆՅԱՆ

Ուշ միջնադարի տաղասաց Սարգիս Բալունցին բանասիրության մեջ քիչ ուշադրության արժանացած հեղինակներից է։ Նրա գրական ժառանգություններից հայտնի է տասնյոթ առաջ, որոնք բանաստեղծը գրել է առել 1759 թ. նվեր ստացած մի ձեռագիր գրքի վերջին էջերում։ Մինչև անցյալ դարի 90-ական թթ. այն գտնվել է Կեսարիայի ս. Սարգիս վանքի ձեռագրատանը, իսկ այժմ տեղը հայտնի չէ։

Բանասեր Տրդատ Պալյանը Կեսարիայի վիճակի առաջնորդական պաշտոնը վարելիս (1887—1911) կազմել է հիշյալ վանքի ձեռագրերի ցուցակը, ուր կա նաև մեզ հետաքրքրող ձեռագրի (№ 7) նկարագրությունը¹։ Ըստ այդ նկարագրության, ձեռագիրը բաղկացած է եղել 166 էջից, գրելը, գրչության վայրն ու թվականն՝ անհայտ։ Ձեռագիրն սկզբից մինչև 154-րդ էջը Սիմեոն Զուղայեցու «Տրամաբանությունն» է, իսկ 155-րդ էջում՝ աշխատության վերջաբան-հիշատակարանը, որը Տ. Պալյանը սխալմամբ վերագրել է ձեռագրի գրչին²։ Նույն էջում Սարգիս Բալունցին, որպես հետագա ստացող, թողել է հետևյալ հիշատակարանը. «Շնորհացու գիրքս այս ընծայ ինձ՝ Սարգիս վարդապետիս Բալունցոյ, ձեռամբ առն ումեմն հոգեսիրի Կարապետ կոչեցելոյ, որոյ որդիքն... (անոռնները գրված չեն) կոչեալ, առ ի յիշատակ հոգւոց իւրեանց եւ հանգուցելոց ի Տէր, Որ և Քրիստոս աստուած ընկալցի ի փառս իւր եւ հատուցէ վարձս վաստակոց իւրեանց քի միւսանգամ գալստեան, շնորհելով արքայութիւնն երկնից անգրաւ յաւիտենից. ամէն։ Եղեւ այս՝ թվին ՌՄԸ (=1759), ապրիլի ԻԸ (28) օրն, ի Տրովադայ, առ դրան Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Ստեփաննոսի գեղեցիկ տաճարացս»³։

Հիշատակարանից հետո ձեռագրի 156—166 էջերում Բալունցին թողել է իր տաղերը հետևյալ վերտառությամբ՝ «Տաղք ասացեալք ի տէր Սարգիս վարդապետէ Բալունցոյ՝ աշակերտէ տեառն Միքայէլ կաթողիկոսի Կիլիկեցոյ»⁴։ Տ. Պալյանն իր ցուցակում ընդօրինակելով դրանք, նշել է, թե «սույն տաղք՝ թվով 17, ինքնագիրն են հեղինակին, ընդօրինակությունքն տես վարը»⁵։ Սակայն ձեռագրացուցակում ընդօրինակված է ոչ թե 17, այլ՝ 16 տաղ։ Հավանաբար, ծանոթագրության 17-ը տպագրական վրիպակ է⁶։ Բ. Կյուլե-

1 Տ. Պալյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հ. Ա, տետր Ա (Ցուցակ հայերէն ձեռագրաց սուրբ Սարգիս վանուցն ի Կեսարիա), Կ. Պոլիս, 1892, էջ 16—22։

2 Նույն տեղում, էջ 16, հմտ. Սիմեոն Զուղայեցի, Գիրք տրամաբանութեան, Կ. Պոլիս, 1728, էջ 232—233։

3 Նույն տեղում, էջ 16։

4 Նույն տեղում, էջ 17—22։

5 Նույն տեղում, էջ 16։

6 Աղբյուր ունենալով Տ. Պալյանի ձեռագրացուցակը, Հր. Աճառյանը գրել է. «Սարգիս վարդապետ Բալունցի. աշակերտ Միքայել կաթողիկոսի Կիլիկիո. տաղասաց. ունի 17 տաղ, որոնց ինքնաձեռագիրը՝ 1759 թվից, մնում է այժմ (Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բանարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 158)։

սերյանն իր «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» աշխատության մեջ, առանց աղբյուրը նշելու, տեղեկացնում է, թե 1770 թ. «Բալուեցի Սարգիս վարդապետ «Ողբեգական Տաղ» մը նվիրած է Գաբրիել կաթողիկոսի՝ անոր նահատակության առթիվ»⁷, Դժբախտաբար այս տաղը մեզ չհաջողվեց հայտնաբերել:

Ուշագրավ մի վկայություն էլ թողել է Կիլիկիայի կաթողիկոս Եփրեմ Ա.-ն (1771—1784) իր տոհմի՝ Աջապահյանների կիսավարտ ազգաբանության մեջ, նա վկայում է, որ իր հորեղբոր՝ Միքայել Ա. Աջապահյան կաթողիկոսի կյանքի պատմությունն, իրեն կանխելով, գրել է «ոմն յաշակերտաց նորա (Միքայելի—Հ. Բ.). ըստ իւրոյ եղականի իմաստութեանն քաղցրաշար շարադրութեամբ, զիմս ասեմ վարժապետ՝ ՂՍարգիս մեծիմաստ վարդապետըն...»⁸: Շատ հավանական է, որ այս Սարգիս վարդապետը, որի գրած կենսագրականը մեզ չի հասել, նույն ինքը՝ Սարգիս վարդապետ Բալուեցին է: Հիշենք, որ վերջինս, իր իսկ վկայությամբ, եղել է աշակերտը «տեառն Միքայել կաթողիկոսի Կիլիկեցոյ», այն է՝ Միքայել Ա. Աջապահյանի (1737—1758), Եթե իրոք այդպես է, ապա պիտի ընդունենք, որ Սարգիս Բալուեցին ոչ միայն եղել է Միքայել կաթողիկոսի աշակերտն ու կենսագիրը, այլև նրա եղբորորդու՝ Եփրեմի ուսուցիչներից մեկը⁹:

Եղած տվյալներով հնարավոր չէ որոշել Սարգիս Բալուեցու ծննդյան ու մահվան թվականները: Մնված պետք է լինի XVIII դ. սկզբին, Մականունից կարելի է ենթադրել, որ ծագումով Բալու քաղաքից էր:

Թուրքերի ճնշման տակ Բալուի հայերից շատերը թողնելով հայրենի քաղաքը, հաստատվել են Կիլիկիայի խոշոր քաղաքներում, հատկապես՝ «վաճառաշահ» Ադանայում: Բալուեցի հայերի «գրեթե հինգերորդ մասը գաղթած է Կիլիկիայի կեդրոնն՝ Ատանա»,— գրում է Ս. Էփրեկյանը¹⁰, ինչպես պարզվում է Սարգիս Բալուեցու հիշատակարանից, նա ևս թողնելով իր ծննդավայրը, հաստատվել է Ադանայում:

Բալուեցու ապրած ժամանակաշրջանում Կիլիկիան վաղուց արդեն կորցրել էր իր վաղեմի փառքն ու զորությունը: Կործանվել էր հայոց թագավորությունը, և հայերի մեծ մասը գաղթել կամ բնաջնջվել էր: Երկիրը դար-

7 Բ. Կյուլե սերյան, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939, էջ 504:

8 Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց Ի Վիեննա, հ. Ա, Վիեննա, 1895, էջ 359:

9 Հավանաբար Սարգիս Բալուեցին գրադրել է նաև գրչութամբ XVIII դ. կեսերին Ադանայի ս. Աստվածածնի և ս. Ստեփանոսի եկեղեցիներում, ուր այդ ժամանակ գործել է նա, ընդօրինակվել են մի շարք ձեռագրեր, որոնց գրիչն է Հովհաննեսի և Մարգարտի որդի Սարգիսը: Վերջինս իրեն կոչել է «մարմնաքանձ» և «յողուածաքանձ» մականուններով, չնչնով սակայն, իր բալուեցի կամ վարդապետ լինելը (Ն. Պողոսյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ցակոբեանց, հ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 526, Մ. Քեչիշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի մատենադարանին, հ. Ա, Վիեննա, 1964, էջ 294): Ուշագրավ է, որ Սարգիս գրիչը ի թիվս այլ ձեռագրերի գաղափարել է նաև Սիմեոն Զուղայեցու «Տրամաբանութիւնը», հավանաբար օրինակ ունենալով 1759 թ. Բալուեցու ստացած ձեռագիրը: Գաղափար օրինակը ըստ երեւոյթի եղել է անբավարար վիճակում և գրիչն, իր վկայությամբ, բավական աջխառն է նրա սրբագրության վրա (Ն. Պողոսյան, Մայր ցուցակ, հ. Գ, Երուսաղեմ, 1968, էջ 161): Ըստ երևույթին Բալուեցուց տարբեր է մահտեսի Սարգիս Բալուեցին, որը 1749 թ. իր կնոջ՝ Կուզալի հետ, Երուսաղեմում ստացել է մի Շարակնոց (Ն. Պողոսյան, Մայր ցուցակ, հ. Ե, Երուսաղեմ, 1971, էջ 499):

10 Ս. Էփրեկյան, Բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վիեննա, 1902—1907, էջ 729—730:

ձեւ էր ինքնակոչ թուրք իշխանների ու գավառապետների կովախնձոր: Այս պայմաններում տակավին իր գոյութունն էր պահպանում Սսի կաթողիկոսարանը: Սակայն Կիլիկիայի կաթողիկոսները, ինչպես վկայում է ժամանակագիրներից մեկը, «ոչ ևս կարացին կալ մնալ յանդորրու յաթոռ իւրեանց, ալլ երերեալ, տատանեալ շրջին տեղեաց ի տեղ, ի քաղաքէ քաղաք, երբ գտանէին սակաւ ինչ հանգստութիւն՝ յաթոռն դառնային, բայց ոչ կարէին երկար մնալ անդ՝ ի սակս տառապանացն, զոր կրէին յապստամբ բռնակալացն վասն դրամոյ...»¹¹: Այս իրավիճակում Կիլիկիայի իրար հաջորդած երեք կաթողիկոսներ՝ Միքայել, Գարրիել և Եփրեմ Աջապահյանները շարաշար սպանվեցին թուրք բռնապետների կողմից: Ինչպես տեսանք, Սարգիս Բալուեցին այդ կաթողիկոսներից առաջինի աշակերտն էր և վերջինի ուսուցիչը:

Իր կյանքի մեծ մասը Բալուեցին ապրել է Ադանայում: Քաղաքն այդ ժամանակ ունեցել է հայ եպիսկոպոսական աթոռ՝ առաջնորդութամբ Գրիգորիս եպիսկոպոսի: Այնտեղ կային նաև «ի հնուց մնացած երկու եկեղեցիներ՝ Սուրբ Աստվածածին և Սուրբ Ստեփաննոս»¹², որտեղ և գործել է Սարգիս Բալուեցին: Հատկանշական է, որ բանաստեղծն իր կրոնական տաղերից մեկը նվիրել է Աստվածածնին, իսկ մեկ ուրիշը՝ Ստեփանոս Նախավրկային¹³:

Թերևս որոշ ժամանակ Բալուեցին ապրել է նաև Սիս քաղաքում, որտեղ առիթ է ունեցել աշակերտելու Միքայել Աջապահյանին: Սա ժամանակի կրթված մարդկանցից էր. Կիլիկիայի կաթողիկոս է ընտրվել քսան տարեկան հասակում և իր կաթողիկոսության քսաներորդ տարում սպանվել է Կիլիկիայի բռնակալներից մեկի՝ Ղոզանօղլու Յուսուֆ աղայի կողմից¹⁴: Հայտնի չէ, թե Բալուեցին ե՞րբ և ի՞նչ պայմաններում է աշակերտել Միքայելին: Պարզ է միայն, որ նա չափազանց պիղծ ու ակնածել է իր ուսուցչին, նրան համարել «գերապան՝ գիտող» և այնքան հպարտ է եղել նրան աշակերտած լինելու համար, որ այդ փաստը նշել է տաղերի ընդհանուր խորագրում: Բայց իր սիրո և երախտիքի ամենամեծ առհավատչյան, ըստ երևույթին, մեղ չհասած այն վարք-կենսագրութունն է եղել, որ նա, հավանաբար, դրել է Միքայելի նահատակութունից (1758 թ.) հետո: Եփրեմ կաթողիկոսի վկայութամբ, այդ կենսագրականը գրված է եղել «ըստ իւրոյ եզականի իմաստութեանն քաղցրաշար շարադրութեամբ»¹⁵:

Ըստ երևույթին, Սարգիս Բալուեցին վարդապետ է ձեռնադրվել հենց իր ուսուցչի՝ Միքայելի կողմից, նրա կաթողիկոսության վերջին տարիներին: Տաղասաց վարդապետը Կիլիկիայում բավական մեծ անուն ու համարում է ունեցել և սերտորեն կապված է եղել Սսի կաթողիկոսարանին: Այդ իսկ պատճառով, ինչպես նշեցինք, նրան է վստահվել Աջապահյանների տոհմից Եփրեմ Ա-ի կրթության գործը: Վերջինս հետագայում իր ուսուցչին մեծարելով, նրան անվանել է «մեծիմաստ վարդապետ»: Հավանաբար, Բալուեցին իր աշակերտին այլ գիտությունների հետ մեկտեղ սովորեցրել է նաև բանաստեղծական արվեստի գաղտնիքները: Այդ են վկայում Եփրեմ Ա-ի շա-

11 «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 720, 729—730:

12 Ս. էփրիկյան, նշվ. աշխ., էջ 356:

13 Տ. Պալյան, Ցուցակ, էջ 21:

14 Բ. Կյուլեւսեբյան, նշվ. աշխ., էջ 490:

15 Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 359:

փափոց ստեղծագործությունները¹⁶, ի դեպ, նվիրված կաթողիկոսը թողել է նաև իր տոհմի՝ Աջապահյանների ինչպես արձակ, այնպես էլ չափածո պատմությունը¹⁷:

Թե ո՞ր հասակից է Բալուեցին զբաղվել տաղերգությամբ՝ անհայտ է: 1770 թ. նա դեռ ապրում և ստեղծագործում էր: Այդ թվականին դաժանորեն սպանվել է Միքայել կաթողիկոսի եղբայրն ու հաջորդը՝ Գաբրիել Աջապահյանը (1758—1770)¹⁸, և այդ առիթով Բալուեցին գրել է հիշյալ «Ողբերգական տաղը»:

Առայժմ այսքանն է հայտնի տաղասաց Սարգիս Բալուեցու կյանքի ու գործունեության մասին:

Բալուեցու մեր ձեռքի տակ եղած թվով 16 տաղերից յոթը սիրո երգեր են, երկուսը՝ խրատական բանաստեղծություններ, իսկ մնացած յոթը ունեն կրոնական բովանդակություն: Նրա տաղերի վրա, ընդհանուր առմամբ, նկատելի է միջնադարի տաղերգուների ազդեցությունը: Անշուշտ, կանոնավոր կրթություն ասացած և վարդապետի աստիճանի հասած բանաստեղծը քաջ ծանոթ է եղել միջնադարի հայ քնարերգությանը: Նրա ներաշխարհի վրա, ըստ երևույթին, իրենց հետքն են թողել նաև կիրիկյան շրջանում տարածված ժողովրդական սիրո երգերը:

Դժվար է ասել, թե Բալուեցին ծանոթ է եղել նաղաշ Հովնաթանի ստեղծագործությանը, բայց իր սիրային տրամադրություններով նա բավական մոտ է վերջինիս, թեև չունի նրա խոսքի հմայքն ու դույնների ճոխությունը: Մինչդեռ բանաստեղծական արվեստով Բալուեցին հարազատ է իր մեծ ժամանակակիցին՝ Պաղտատար Դպիրին:

Բալուեցու ստեղծագործության մեջ առավել հաջողված են սիրային տաղերը, ուր առկա է հեղինակի բուռն սերը՝ կնոջ, բնության և աշխարհիկ կյանքի նկատմամբ: Նրա սիրո երգերը մի տեսակ առաջարկ-հրավերներ են, կարոտալի կանչեր՝ ուղղված հեռավոր սիրեցյալին.

Սիրայորդոր ծաղկանց հոտոյն
է՛ջ ի պարտէզ առաւօտուն,
Ա՛ռ զիս ընդ քեզ, իմ ցնծութիւն.
Ուրախ լեր, սէ՛ր իմ սիրասուն...
Բամեալ սիրով բազմիմք սեղան
Հետ սիրելեաց զարմանազան,
Դրուատեսցուք երգ քաղցրաձայն.
Ուրախ լեր, սէ՛ր իմ աննման (էջ 17—18)¹⁹:

Ճակատագրի բերումով բանաստեղծը բաժանվել է սիրուհուց և հեռանալով նրանից առավել ուժգին է կարոտում նրան: Կարոտը նրա աչքերից

¹⁶ Բ. Կյոնւկեսբեյան, նշվ. աշխ., էջ 511—526:

¹⁷ Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 220—221:

¹⁸ Այս մասին տե՛ս նվիրված Ա-ի հիշատակարանը (Ա. Սիւրմեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի ս. Քառասուն Մանկունք եկեղեցւոյ և մասնատրաց, Երուսաղեմ, 1935, էջ 372):

¹⁹ Բալուեցու տաղերից կատարված այս և հետագա մեջբերումները Տ. Պալյանի հիշյալ ցուցակից են (էջ 17—22):

«աղըներանման» արցունքներ է բամում, և բանաստեղծն անվերջ կանչում է ցանկալի կնոջը, երանի տալով բոլոր նրանց, ովքեր նրա կողքին են, նրա ալբի առաջ.

Երանի տամ քեզ ունողաց, նազելի՛,
Տեսոյդ հանդէպ դեղերողաց,
Ի մենջ զիա՞րդ շրջիս ի բաց... (էջ 18):

Բալուեցին համարձակ է իր առաջարկների մեջ: Նա չի ամաչում իր սիրո համար, չի խուսափում նաև սիրո հաճույքներից.

Մոց քո պարտէզ՝ շնորհիւ լցեալ բարելից, բարելից,
Յետնեալ ծառայս ա՛ռ ի ծոց քո բարելից, սէր իմ, բարելից...
(էջ 18):

Սիրո երգերի մեջ Բալուեցին, միջնադարի սիրերգակ բանաստեղծների նման, վառ գույներով է պատկերել սիրած կնոջ արտաքինը: Նրա գովերգած կինը, իր իսկ բառերով ասած, երջանկատես է ու չքնաղատիպ, քաղցրահայաց է ու պատվական, շուրթերը դռներ են՝ գեղեցիկ ու կարմրորակ, ծոցը պարտեզ է՝ շնորհներով լեցուն, ունքերը խորաններն են նրա արվիտրակ ալքերի, որոնք բազում ցավերի սպեղանիներ են, այտերը գեղեցիկ են ինչպես բյուրեղ ու լուսահեղ են ու պայծառափայլ:

Նաղաշ Հովնաթանի նման Բալուեցին էլ սիրո պատկերումը ներդաշնակել է բնության նկարագրությանը: Գարունն է սիրո ամենալավ եղանակը, և բանաստեղծն իր սիրո երգերի մեջ ներկայացնում է վերածնվող բնության մի քանի տեսարաններ.

Գոյնզգոյն մրգաբեր ծառեր,
Մանտրագորք անուշք, նշաբեր
Կարմիր-ճերմակ ծաղկամբ ծաղկեր, ազնի՛ւ,
Որոց հոտոյն եմ զմայլեր (էջ 17):

Կամ. վաղ առաւոտ ցօղն իջանի,
Տերև ծաղկանցն փայլփայլի,
Արփին պայծառ արև ծագի.
Ուրախ լեր, սէ՛ր իմ սիրելի (էջ 18):

Բնության մեջ ծաղկած սերը կատարյալ է դառնում, երբ ուղեկցվում է խրախճանքով՝ գինով ու երգով.

Բախարար քաղցրիկ բաժակ,
Լցեալ լի ոսկեայ ըմպանակ,
Գեղեցիկ շրթամբ կարմրակ
Ա՛րբ, ուրախ լեր, սէ՛ր իմ, անքանակ (էջ 18):

Բալուեցին գնահատում ու գովերգում է ազնիվ և ճշմարիտ սերը: Հատկանշական է, որ նրա սիրո երգերն ունեն «Առ օէրն ճշմարիտ» խորագիրը: Ճշմարիտ սիրահարի համար սիրո առարկան ամեն ինչ է, և ամեն ինչ նրանով է իմաստավորվում ու գեղեցկանում:

Բալուեցու սիրո երգերից մեկը գրված է վարդի և սոխակի այլաբանությամբ և հնչում է տրպես սիրահարների երկխոսություն-զուգերդ (էջ 19)։ Ուշ միջնադարի մյուս տաղերգուների նման դիմելով վարդի ու սոխակի այլաբանությանը, նա չի ձգտել քողարկել սիրո զգացմունքը։ Այդ այլաբանությունը նրա ապրած դարաշրջանում սոսկ սիրված գեղարվեստական հնարանք էր։

Բալուեցու տաղերն իրենց կառուցվածքով բաղմաղան են։ Դրանք, ըստ երևույթին, գրվել են հատուկ եղանակների համապատասխան, մի երևույթ, որ բնորոշ է ժամանակի տաղերգուներից շատերին։ Նրա բանաստեղծությունների մեծ մասն ունի կրկնակներ, տրոնք տաղերին հաղորդում են հնչեղություն ու երաժշտականություն՝ ընդգծելով նրանց հիմնական տրամադրությունը։ Օրինակ.

Արգաւանդ, պտղատու այգոյ նոր ծաղիկ, սե՛ր իմ, նոր ծաղիկ,
Բուրի ի քէն հոտ կեցութեան անուշիկ, անուշիկ,
Ջմայլեցոյց սիրահարեալս քոյդ հոտիկ, սէ՛ր իմ, քոյդ հոտիկ.
Ո՛վ աննման, ե՛կ, մի՛ թողուր զիս միայն, զիս միայն,
Ե՛կ, մի՛ մնար, ե՛կ, ոչ կարեմ կալ միայն, կալ միայն (էջ 18)։

Բանաստեղծը, երբեմն, տների բովանդակությանը կամ հանգավորմանը համապատասխան որոշ փոփոխություններ է մտցնում կրկնակների մեջ, որոնք ավելի ճոխ տեսք են տալիս բանաստեղծությանը։ Այսպես, «Սիրալուրդոր ծաղկանց հոտոյն» սկսվածքով տաղի առաջին տան կրկնակն է «Ուրախ լեր, սէ՛ր իմ սիրասուն»։ Հաջորդ տներում «սիրասունին» փոխարինում են «անքանակ», «պատուական», «սիրելի», «աննման», «հեզ» և «բարեբաստ» մակդիրները (էջ 17—18)։

Բալուեցին ունի ինչպես 2, այնպես էլ՝ 4—6 տողանոց տներով տաղեր։ Ընդ որում, ամեն տուն ունի իր հանգը։ Պատահում է, որ միևնույն տան մեջ նա կիրառում է տարբեր շափեր։ Այսպես, «Ի դիմաց սրբոյն Ստեփաննոսի» տաղը բաղկացած է հնգատող տներից, որոնց առաջին շորս տողերն ունեն ութ վանկ, իսկ հինգերորդը՝ տասներեք։ Նույն ձևով, «Սիրելի իմ, քաղցրահայաց նազելի» սկսվածքով տաղի մեջ տների առաջին տողերն ունեն տասնմեկ վանկ, իսկ երկրորդ և երրորդ տողերը՝ ութ։

Բալուեցու գրեթե բոլոր տաղերն ունեն բանականներ (ակրոստիքոս), որոնց մեծ մասը հոդում է «Սարգիս» կամ «Սարգիս վարդապետ»։ «Ի դէմս անառակին» տաղի բանականով հոդվում է «Ի Սարգիս վարդապետ Բալուեցոյ է», իսկ «Արգաւանդ, պտղատու այգոյ նոր ծաղիկ» սկսվածքով տաղի տներն սկսվում են, համապատասխանաբար, հայոց այբուբենի առաջին հինգ տառերով։ Ուշագրավ է, որ Բալուեցու կազմած բանականներով Սարգիս անունը հոդվում է այլ սկզբունքով, իսկ վարդապետը՝ այլ։ Այսպես, «Նորին ասացեալ խրատօրեն» բանաստեղծության առաջին երեք քառատողի կենտ տողերի սկզբնատառերով կարդում ենք «Սարգիս» անունը։ Տաղի վերջին տունը բանաստեղծը հատելով դարձրել է ութատող, որի սկզբնատառերով էլ հոդվում է «վարդապետ» բառը։

• Բալուեցու տաղերը, հատկապես սիրո երգերը, գրված են պարզ ու մատ-
չելի զրաբարախառն արևմտահայերենով: Նա ունի բավականին հարուստ
բառապաշար: Իր լավագույն տաղերով Բալուեցին ինչ-որ չափով հարստաց-
րել է ուշ միջնադարի հայ քնարերգությունը և իր համեստ տեղն ապահովել
այդ դարաշրջանի տաղասացների շարքում²⁰:

САРКИС БАЛУЕЦИ

Г. Г. БАХЧИНЯН

Резюме

Саркис Балуети, поэт XVIII в., жил и творил в киликийском городе Адана, был учеником и биографом католикаса Киликии Микаэла Аджапахяна, а также учителем католикаса Ефрема Аджапахяна.

Т. Палян опубликовал 16 стихотворений поэта в своем «Каталоге армянских рукописей в Турции».

В поэзии Балуети мы находим любовные (7), нравоучительные (2), религиозные (7) стихотворения, однако высокими художественными достоинствами отличается в особенности любовная лирика поэта.

20 Քանի որ Սարգիս Բալուեցու տաղերը պահպանվել են միայն Տ. Պալյանի ձեռագրացու-
ցակում, որից սահմանափակ թվով օրինակներ են մնացել (Մաշտոցյան Մատենադարանում
պահվում է նրա ֆոտոպատճենը), ուստի ուսումնասիրողներին օգնելու նպատակով ստորև բե-
րում ենք այդ տաղերի սկզբնատողերը՝ ըստ ձեռագրացուցակի հաջորդականությամբ:

Ա. Սիրելի սէր իմ և հոգի

Բ. Սիրելի, քո ծառայն եմ ես

Գ. Սաստիկ սիրոյդ առ դիպեցայ

Դ. Սիրայորդոր ծաղկանց հոտոյն

Ե. Սիրելի իմ քաղցրահայեաց, նազելի

Զ. Արգաւանդ, պտղատու այգոյ նոր ծաղիկ, սէր իմ, նոր ծաղիկ

Է. Ահա դարունն եկեալ եհաս

Ը. Սոսկալի աւուրն ահաւոր ուրբաթոյն մեծի

Թ. Սուրբ հոգի, անստեղծ լուսատու և լոյս

Ժ. Սահման սիրոյ երկնածորան, որ ի վերուստ ծագեցար

ԺԱ. Սուտ, անցաւոր, պատիր կենաց, անձն իմ, քանի՞ մէկ խարիս

ԺԲ. Արդ ընդէ՞ր տրտում ես, սիրտ իմ վարանեալ, աւաղ

ԺԳ. Սրբուհի կոյս՝ համատարած արարածոց արարչին

ԺԴ. Սուրբ Ստեփաննոս, քաղցրաձայն հաւ

ԺԵ. Ի յելից կուէ՞ հրաւէր հարսանեաց

ԺԶ. Ի հայրենի դթոյն տարամերժեցայ